

մէջ Պատ, Որմ նշանակութեամբ, համեմատ մեր հայերէնի փոխառութեան. թէ և արաբերէնն լինի սեմական լեզուներու ընտանիքէն, սակայն վերեւ յիշեցիր որ նորա մէջ ալ սպրդեր են պահլաւ և զինտի զաւատաբարբառներէն ինչ ինչ բառեր: Ապա թէ ոչ Պարսկերէն բառերքի յօրինողն ինչեւ պիտի յիշէր Արաբերէնը, եթէ իրեն համար լեզուական շահ մը չունենար:

Երկրորդ աւելի հիշուականութիւն է Գէորգ զպրի յօրինած բառագիրքն, որովհետեւ հաւատարմապէս նա հմուտ եղած է թէ՛ Պարսկերէն, թէ՛ Արաբերէն, թէ՛ Տաճկերէն և թէ իւր մայրենի լեզուին: Արդ այդ բառգիրքն յետ տալու աւելի ճշգրիտ և բացայայտ մանրամասնութիւններ Թիւրքերէնի շարած 1. 2. 3. Թիւրքերէն, կը յաւելու (Թ. 3.) սո՛ր կը նշանակէ « ո՛րս զԱՐԻՍՊ. զպէ տիվարի. և ըստ այսմ է բառ ընկերական ընդ արէպս »:

Իսկ երրորդն՝ Պարսկերէն — Անգլիարէն կաւորեալ բառարանն երկու Սյուր ունի առանձին առանձին, մէկն կը նշանակի միւս երկու բառագրոց, իսկ երկրորդի առջեւ զատ դնում է Սյուր 1-ը մագլցել (պատնիք վեր), Climbing a wall). — 2. ՔԱՂԱՌԻ ՄԷ ՂԱՐԻՍՊԷ, A wall of a city. — 2. Ապարանջանք (օղակ) Bracelets (pl. of 1-ը). — 4. Տափակ, ցածր ինուսթիւն (ինչպէս են ախոռները, ասպատոսանքները) Lofty edifices. — 5. Պատերու լիցքը, Rows of stones in a wall. — Ուստի Գէորգ զպրի Պարսկերէն — Հայերէն և F. Steingass Ph. D. Պարսկերէն — Անգլիարէն բառարանները լիովին իրաւունք տալով և հաստատելով մեր մտքի յղացած գիւտը, Թիւրքերէնի կը պարտաւորեցնեն «կոչուածքի և հարսանիքի» Սյուր ձայները կտրել: Vulnerant omnes, ultima necat.

Ուրեմն նկատելով որ Սյուր կամ Սյուր բառը Պարսկերէնի (և արաբերէնի) մէջ կը նշանակէ հաստատուն զԱՍ իւր հիմունքների վրայ կանգնած, և թէ նոյն իմաստով Բիւզանդ զործածք է, նշանակելու Պարսից արքայի ասպատանի շրջապատն:

Նկատելով որ «մեր բառի համեմատութիւնը պարսկերէնի հետ եւթ է և ըստ երկու բառարաններուն կը նշանակէ ոՐՄ, ՊԱՏ, ՊԱՐԻՍՊ, ՈՍՍԻ

կ'երակացները որ մեր Սորակաւն կը նշանակէ « Պատնիշափակ, պարսպափակ շինի, տեղոյ կառավարիչը. այսպէս Պարսից արքայի ասպատանն, ձիանոցները, ախոռները, քաղաքորմի, զուարակափակ տեղոյ մէջ ամփոփուած, որու վարիչն է ՍՈՐԱՎԱՆ, նոյն և զԼՈՒԼ ու վերակացու տանը, աւանի ՆՈՒՌԱՎԱՅԷՆ »:

Եւ մեր պաշտպանած շրջափակ պարսպներն բոլորովին տարբեր են « Արեւելքի և ի մասնաւորի Պարսկաստանի » զեղջուկ պատերէն. մենք օրինակներով բացատրած ենք թագաւորական հաստատութեանց մասին, ինչպէս են այժմու և ամէն ժամանակի իշխաններու և թագաւորներու շրջափակ կալուածներն, Վիլլաներ, դղիւններ, ապարանքներ: Մենք համարած ենք որ Պարսից արքայի Ասպատանն, նոյնքան զեղեցիկ ընդարձակ և արքայաժայել եղած լինի, որքան խոսրովու կառուցած « Տիկնուտի ասպարանք » և « Տանարն մայրի » և Երուսաղայ « Ենընդոց անտառն »: Որով « որմածտ արգելոցաց » ի, «պարսպեալ փակեցին» ի և «քաղաքորմ» ի վարիչն կամ ԽԱՍԱՎԱՆ, առանց վերաւորուելու կրնան կոչել ինքզինքսին ՊԱՐՍՊԱՎԱՆ և կամ ՍՈՐԱՎԱՆ կամ ՆՈՒՌԱՎԱՅ ասպատանին արքային Հայոց Մեծաց:

Հ. Գ. ՆԱՍԱՅԵՏԵԱՆ

ԼԵԶՈՒՆԳԻՏՈՒՄ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ

Բ

ԱՆՏԵՆՆԱԹԻԻՆԻՐ

(Շաբ. տես բազմ. 1924, էջ 273)

7. — Հայերէն այբուբենը կը գործածուի նաեւ իւր թուահամար գլխոց, և մեծ դիւրութիւն, խնայողութիւն ու զարգէլ թէ՛ գրողաց և թէ՛ տպագրութեան համար: Երևանեան ուղղագրութիւնը ջնջելով և կամ եօթն թուահամարը, տապալեց այբուբենին այդ կարևոր պաշտօնը: Որուն անձանօք կովկասեցիք ոմանք եթէ առին

լատինական թուագրերը, և ուրիշներ անգիտակցաբար հետեցան անոնց, այդ ձախաւեր նորութիւնը կանոն չէ կարող կազմել մեզ՝ Հայերստ համար որ կառչած պիտի մնանք մեր թուանշանաց:

Նոյն այրուքներ թէ՛ հին մատենագրութեան և թէ՛ այժմու տոմարական հաշիւներու մէջ կը գործածուի նաև նշանակելու տարեթուերը և ուրիշ տոմարական թուահամարներ: Արդ՝ է և 2 տառերու յապաւմամբ՝ այրուքներ կը խանգարի, կը կորսնցնէ իւր թուական արժէքը, և կը դադրի իւր այս երկրորդ պաշտօնէն ևս, արդաւանական և աղբատառացեալով հայերէնը:

8. — Բայց քան զայդ աւելին ալ կայ, երեւանեան վճռին մէջ բոլորովին անտեսուած է նշանագրին գլխաւոր դերը կամ վախճանը: Չհարուեցաւ այն՝ խօսելու համար, խօսելու և լսելու գործաւանները ձայնի՝ պէտք ունին, ոչ զրի. այլ ստեղծուեցաւ՝ ցրեթա և կարգապահ նշանաւորով: Այսինքն զաղափարներ փոխանակելու և փոխանցելու տեղով կամ ժամանակաւ հետաւոր անձանց, և այդ միջոցով ազգի մը մեծ ընտանիքին անդամներն ու սերունդները յաջորդաբար կապակցութեան մէջ պահել իրարու հետ: Որով իւր իսկական պաշտօնն է՝ ցարս. փարեք ներկայացնել, ինչ որ միակ գործն իսկ էր երբեմն՝ երբ պատկերային վիճակն ունէր Եգիպտոսի մէջ, և է մասամբ ցայսօր օտարազգիներու համար, որոնք դժուարաւ կը յաջողին տիրանալ իրենց ոչ բնիկ լեզուաց իսկական հնչումներուն, և աւելի անոնց ձեւերուն հետ կը կապուին:

Իրաւ է՝ թէ զրին ստեղծողները ջանացին զաղափարաց հետ հնչումներն ալ ներկայացնել: Բայց այս վերջին մասը չափով մը միայն կրնային կատարել, որովհետեւ ոչ մէկ ժամանակ և ոչ մէկ ազգի մէջ հնարաւոր է հնչմանց միաձեւութիւնը, ինչպէս այժմ՝ նաև անցելոյն մէջ: Որով զիրը պիտի տար ազգի մէկ մասին, մէկ փոքր ու ազդեցիկ մասին հնչումը միայն. և այն՝ որով չափով մը: Իսկ ազգի մեծամասնութեան համար, բաժնուած զա-

նազան զաւառաց մէջ, և հնչմամբ ալ զատուած իրարմէ, պիտի լինէր նոյնպէս աւելի զաղափարաց քան ձայնի թարգման: Չի ձայնը ներկայացնելու համար՝ հարկ պիտի լինէր մի և նոյն ազգի մէջ քանի մը տեսակ ուղղագրութիւն հաստատուէ՝ ըստ զանազանութեան հնչմանց: Եթէ զիրը մինչեւ ցարդ այդ մասնական դերը միայն կառողացաւ կատարել, ինչ ձև ալ տրուի ուղղագրութեան, մասնականութենէ երբեք չպիտի հեռանայ. և ազգին ստուար մասին համար պիտի մնայ միշտ զաղափարաց ներկայացուցիչ, ընդունայն է ուրեմն, նորաձեւութեան վերմէն տարուելով, այլայլել ուղղագրութիւնը:

Բայ ի զաւառական զանազանութեանց՝ ժամանակն ալ կը փոփոխէ հնչումները, և կը խանգարէ անոնց միաձեւութիւնը: Եւ որպէս զի այդ փոփոխութեամբ ընկերական հաղորդակցութիւնը չխափանուին, պէտք է որ զիրը հաստատուուն մնայ, իրեն հետ փոքր ի շատէ հաստատուն պահելով ձայններն ալ. և ծանօթ լինի ամենո՞ն և ամէն ժամանակ՝ իւր ձեւով և ուղղագրական ընդհանուր կանոնով, որով միայն պիտի կարենայ հասարակաց մտքին թարգման լինել ընդ մէջ ներկայից, և անցելոց ու ապագայից: Այս սկզբունքով է, զոր օրինակ, որ մինչդեռ այսօր վերին և հարաւային իտալացիք կը հեռանան իրարմէ՝ թաւ և նուրբ տառերու հնչման մէջ, օրինակ՝ custode բառը վերինները հնչելով գուպոստ, միւսերը կուստոյէ, — մեր արեւելեան և արևմտեան հնչումներու պարագայն է՝ ճշդիւ, — և տոակապցիք՝ որ զբական լեզուի հայրը լինելու գերակշռութիւնն ունին, կ'ըսեն հաղորտէ, բնաւ չեն խորհրդ՝ ոչ ուղղագրութիւնը փոխել, և ոչ հնչումներն ուղղագրութեան մօտեցնել: Վասն զի հնչումները փոխել տալ՝ դժուարին է. իսկ ուղղագրութիւնը յեղաշրջելով, իրենց գրուածոց մէջ իրարու համար պիտի լինէին խռով և դուժ: Այս պատճառաւ կը պահեն անոնք հասարակաց ուղղագրութիւնը, թոյլ տալով՝ որ ամէն զաւառ հնչէ իւր ոճով: Հոն զիրը դարձեալ ներ-

կայացուցիչ է և աւելի զաղափարաց քան ձայններու՝ ազգին ամբողջութեան համար:

9. — Երեւանի ձեռնարկութիւնը, չպատահէ իւր զիրացոցն ուղղագրութիւնը, զայն յարմարելով արդի հնչման: Բայց գիտենք՝ թէ հնչումները մեր ազգի մէջ եւ անհաւասար են: Կան պատմականօրէն ու լեզուաբանօրէն սխալ հնչումներ, ինչպէս դեկրետիւն անօրինականները, և կան ուղիղ հնչումներ, ինչպէս հայ զաւառացուց մէջ ցարդ մնացածները, ուր սկզբնական ռ բոլորովին կամ զրեթէ օ է, (Մխիթարեանը ալ նոյնպէս կը հնչեն), մետրերեան կամ իրեն աղբիւր յոյն օի ձայնով, զոր դեռ կը պահէ բառերու մէջ եւս. յ՝ շատ նուրբ է քան հ. ուշա՛ ռոյի եւն հեռի են վա՛՛ ղի ձայնէն. և չունի բնաւ իի ձայնը:

Արդ՝ եթէ պէտք է ուղղագրութիւնը հնչման հաւասարի, հարկ և պատշաճ է՝ որ ամէն հայ հատուած իւր հնչման համեմատ գրէ, որով և իրարմէ տարբեր ձեւերով՝ Որովհետեւ նախ՝ երեւանեան ուղղագրութիւնը չէ կարող՝ իւր օտար ու խորթ հնչմամբ՝ ծառայել արտասահմանի Հայութեան: Եւ երկրորդ՝ հնչման ու գրութեան հաւասարութեան պահանջը, եթէ կայ, և եթէ գրութիւնը համաձայնելու է հնչման, և ոչ հնչումը գրութեան, այդ պահանջը հաւասար է բոլորին համար: Հետեւաբար մեք այդ ոճով պիտի ունենանք քանի մը տեսակ ուղղագրութիւն: Ըստ այսմ նաեւ Կ. Պոլսի՝ որ կը ղօժուարի միջակ և թաւ բաղաձայնները զատել իրարմէ, անոնց մէկ զսոր ջնջելու է:

Իսկ եթէ ընդ հակառակն Երեւան կ'ուզէ որ ամբողջ Հայութիւնն ուղղագրական միակ ձեւ մ'ունենայ, ուրեմն կ'ընդունի ազգին մեծագոյն մասին համար հնչման փոփոխութիւնը, ձայնին զոհուիլը զրին: Բայց ինչո՞ւ այդ վերջը. խմբագրող հայկաբանները չեն փոխել իրենց հնչումը, և հասարակաց օրինակ կու տան ու կը ստիպեն Արեւիկեանի սխալ հնչումը և ոչ ուղիղը, կոպիտ վնասին և ոչ նուրբ ռսկին (օսկի), արտաոց հռչար և ոչ ընտանի յոյսը, և որ ի կարգին: Ինչո՞ւ այդ պա-

րոններն իրենց հնչման տգեղ կաղապարին մէջ կ'ուզեն ձուլել հայ բարբառը: Ո՞ր ճաշակի կամ լեզուագիտութեան հետ կը հաշտուի այդ գործը:

10. — Կապ մ'է գիրը՝ ոչ միայն համացեղից, այլ և զանազան ազգերու միջև, իբրև վկայ անոնց վաղեմի քաղաքական յարնչութեանց, ուսկից յառաջ է եկեր լեզուական կցորդութիւնն ալ, տալով իրարու յատուկ կամ հասարակ անուանց աւելի կամ նուազ ճոխ մթերք մը, որ անցեր է ուղղագրական որոշ կանոնաց խողովակէն, և այդ կանոններով կը զգացընեն բառերն իրենց ծագումը:

Այսպէս մեր լեզուն արիական բարբառներէ փոխ առեր է «Անգատակար, աշնառ, աշարակ, կաշիկ, զաշը, տաշթ» և ուրիշ շատ բառեր՝, որոց արմատական աշը կը պահանջէ պահուիլ և հայերենի մէջ՝ այդպէս, և կամ զինք յիշեցնող ոճով: Իսկ Երեւան վերջինս վերածելով ռի, խզեց հայերենին կապը ընագրաց հետ:

Աւելի մեծ ու սերտ է աղբան յունական լեզուին հետ, որմէ առնուած էին մեր դանիելեան նշանագրերն ալ: Ասորի գիտնականը գտեր էր գրութեան մը, որոյ ներքեւ հայերէն լեզուն կար. իսկ գիրը ծանօթ էր իրեն, որով կարողացաւ կարդալ. այն էր յունարէնն իսկ՝ Հին դարաւոր փորձի մը մնացորդն էր այդ գրութեան, որ փոխառեալ այրուբներին անբաւականութեան պատճառաւ տեղի տուեր էր ուրիշ լեզուաց: Իւր ջրին ձեւն ալ թէւ ընթեռնի, բայց ժամանակը հեռացուցեր էր անկից Ե դարու յունականը, որով Դանիէլ ու հայ պատմիչը կրնային կոչել զայն՝ «նշանագիր» աղփափետաց հայերէն լեզուի»՝ Մետրոք լրացուց այդ տառերը, և հին մասին յունականութեան պատճառաւ համեմատեց զանոնք՝ Հոփանոս յոյն զրչի ձեռքով՝ հեկէն ալփափետաց հետ՝, որոց

1. Hübschmann, Armen. Grammatik. — Թիբարեան, Արիւմայ բառարան:

2. Կրիւն, 9.

3. Նոյն՝ 8.

4. Նոյն՝ 10.

կարգով ալ շարեց հայկականը. և երկու-
քին մէջ մինչև ցարգ կատարելապէս հա-
մանման են փ և ֆ գրերը, (վերջինը
մենագիր Գրիստոս անուան), չհաշուելով
այլոց ալ հեռաւոր նմանութիւնը:

Դանիելի գտած գրութիւնն մէջ յունա-
կան տառերն իրենց հին ձայներով կը
ներկայացնէին հայերէն հնչումները, մինչ
այդ ջրջանին յոյն գրերէն ոմանք արդէն
ձայնափոխ եղեր էին: Այսպէս՝ շրթնային
բ (բ) կը հնչուէր որպէս շրթնատառային
վ. ապացոյց՝ ինչ ինչ լատինական անուն-
ներ, որոց մէջ Վ տառը յոյն գրէչներ
երբեմն ֆով փոխեր են, և մեր ոսկեղա-
րեան թարգմանիչները զայն յունարեմն
բ թարգմանեց են. ինչպէս Բեկտոր՝ (Vic-
tor), Ոկտաւիոս՝ (Octavius), Սերերիա-
նոս՝ (Severianus) են. կամ յունարէն
վիտոն՝ (βίτρος), տառից գիտէն յառաջ
հայացած՝ յունական հնչմամբ. — ֆմային
չ (զ) փոխուել էր կոկորդային դի. ինչպէս
ադէ (ἄγρε, հրմ. ἄγω — բերել բային և
միջարկւ.), կամ պաղ (πάγος), հայացած
նոյն ոճով ու նոյն շրջանին. — Շրթնա-
յին ֆ (փ) եղեր էր շրթնատառային ֆ,
որով «Փոքր արարածոց» անվանը գիրքը
Ե գարուն լատիներենի թարգմանուելով
եփիպտացիէ մը, նոյն գիրը կը վերածէ
ֆի (փոխան յիի). Farao, Feresei, Zel-
fձ են. — ֆմային չ (ք) դարձեր էր կո-
կորդային յւ, ուսկից նախամեծորդեան շրթ-
նանէն մնացած պոսսիւտմեն (πρόσχωμεν),
կամ ապախտ (ἀπαχθεῖς, ἀπάγω — յետս
կամ բայէն), յսեղ (χολός), մն. — Նոյնպէս
ձայնաւորներէն դ (հ) կը հնչուէր ի, որով
և թարգմանուել է երբեմն, ինչպէս Յի-
սուս, Գրիգոր, մի (μῆ), որոնք Մես-
սորէ յառաջ նոյն հնչմամբ ընտելացեր
էին հայ ականջաց, և յետոյ ևս նոյնպէս

Ձապեր, Ես (իւ) ի գարձեր էր. Եփիպ-
տոս, Կիպրոս են:

Ի՞նչ ըրին մեր նախնիք ի տես այդ
յունական նորամուտ հնչումներուն, Զիւ-
պուեցան ու չգիրուեցան աղոյմէ իրենց
թարգմանութեանց մէջ. այլ ընդհանուր
կանոնով՝ հին հնչմանց համեմատ թարգ-
մանեցին յունական անունները, հայերենի
մէջ հնոացնելով զանոնք իրենց ժամանա-
կակից ձայներէն. կամ թէ գրին ձեւը
թարգմանեցին, ոչ ձայնը. այն է՝ β — ք.
ինչպէս վերոյիշեալ անուանց մէջ, և Այէլ,
Աբրահմա են. — γ — գ. Գրիգոր, Գաբ-
րիէլ, Ագաթանգեղոս. — φ — փ. Փարա-
ւոն, Ռաֆայէլ, փարիսեցի. — χ — ք.
Գրիստոս, Աքար, Աքաբա. — η — է.
Դանիէլ, Եզեկիէլ, Էմանուէլ. — υ —
իւ. Կիարոս, Կիարեղ, Բիզանդիոն: Այս
բոլորին մէջ մեր թարգմանիչը հետեւե-
ցան այրութենի կարգին, և ոչ հնչում-
ներուն. և նոյն կանոնով լն եւս անոր
զուգահեռակող կոկորդային դով թարգմա-
նեցին, Ղուկաս, Պաղոս, Սաւուդ: Եւ
ստով ցոյց տուին՝ թէ նաև իրենց գիրը կը
նկատէին սուելի զաղափարաց ներկայա-
ցուցիչ քան ձայնից, և ձայներու ճշդու-
թիւնը զոնցին ձեւերու հաւատարմութեան,
որ պատմական կարեւորագոյն զօդն էր
երկու լեզուաց միջև, մինչ ձայները յեղ-
յեղուկ, չէին կարող կոտան լինել պատ-
մութեան: Նոյն զրոյթիւնը յարգեցին յե-
տոյ թարգմանչաց յաջորդներն ալ մին-
չև միջնադարեան խառնափնդորութիւնը,
և կը յարգեն ցարգ եւրոպացի խոհական
բանասէրք՝ հայ անուանց ու բառից տա-
ռաշրջութեան մէջ, ինչպէս Հիւրշման,
Կելզէր և ուրիշներ: Այսպէս նաեւ երբ
Պաղիասուց մէջ խնդիր ելաւ վերածելու
իւր ի և յիւր ֆի, զգուցեան, առարկե-
լով՝ որ այդ զոյգերը կարեւոր էին ներկա-
յացնելու համար ֆ և փ գրերը յունածին
բաներու մէջ, և զանոնք գտնելու զաղիա-
կաններէն՝ յօգուտ լեզուագիտութեան:

Իսկ ի՞նչպէս վարուեցաւ բազմահմուտ
Աբեղեանը՝ Իրաւ տապաւրը դի համազօր
էի արմին, և Մանուէլ, բոպէ և այլ յուն

1. Եւսեբիոսի՝ Պատմ. Եփեղ. 210, 396, 406.

2. Եւսեբ. Ժամանակացոյց. Ա, 249.

3. Տես եմեապի համառուն եպոս. հատերը. Վենե-
տիկ, 1827.

4. Ուկրեյնական՝ Մեկ. Թղթ. Պատմ. Ա, 267.


5. Հրատ. Herm. Ronsch.

նականներէն ստեղծեց Մանուել, բոպէ
 Լն. — դրաւ ասի թարգման աւ — օր
 արմին, և Պօղոս, օգոստոս Լն շրջեց ի
 Պրոդոս, ոգոստոս. — և կամ յ տառին
 համազօր յն՝ Յակոբ, Յովհաննէս, յորեւ-
 լեան և այլ բառից մէջ փոխեց ի. Հա-
 կոր, Հովհաննէս, հորելյան. և տանուհինգ
 դարերէ ի վեր ամէն հայ աշխի ու բերանի
 ընտանի Յիսուսէն կերտեց նոր Հիսուս մը
 (զոր մեք երբեք չպիտի պաշտենք), չխոր-
 հելով՝ թէ օտար անուանց մէջ ինչ արդէն
 հաշտօն ունէր յունական հազազային՝
 նշանախեցը հայացնել. ինչպէս 'Ρωμη -
 Հոռոմ, 'Ελλην - Հելլէն, 'Επατος - հիւ-
 պատոս, 'Ελλη - հիւղէ Լն. — աս ու ըս երկ-
 րարաւորեալ երկրորդ զրին հաւասար չին
 տեղ վրա դադարեալը դրաւ. Գալիթ, Յեփսե-
 բարս, Յեփզինե, մէկէն երեք անգամ խան-
 դիրիով բնագրերէն. — օսի համազօր ուն
 այլակերպեց նոյն վրով. հուսմար, փետրը-
 վար. — միակ և տառին դէմ կրկին դրաւ,
 յն. ինչպէս Յեղիա, Յեւթեր, յեփսեփոս:
 Միով բանիւ հայերէնն ապականող պղտոր
 ջուրը թափեց նաև յունական տարերաց
 կամ նորինաց թարգմանած անթիւ ա-
 նուանց վրայ, ըսելով. «Եկայք խառնա-
 կեացուց զլեզուս նոցա», որպէս զի այսու-
 հետեւ Հայեր և օտարներ չհասկանան
 զիրար:

11. — Ինչ էր մետրոսիան ուղղա-
 գրութեան մեղքը: Արդեօք ընթերցողաց
 բերանին մէջ կ'այլայլէր բառերու այժ-
 մեան հնչումները: Ոչ. իսկ ինչ պիտի
 պատահէր, եթէ ամբողջ ազգէն ընդու-
 նուէր նոր ուղղագրութիւնը: Պիտի խան-
 գարուէին հայերենի հնագոյն և ուղղագոյն
 հնչումները, որոնք զեղ կենդանի են մե-
 ծախսութեան մը բերանին մէջ, ինչպէս
 նկատեցինք վերեւ. և հին մատուցողու-
 թեանց մէջ գտնուած բիրաւոր հայ և օտար
 անունները կոչուելով նոր գրուածոց մէջ,
 պիտի խեղաթիւրուէին, ինչպէս եղան Ե-
 բեանի մէջ: Հիսուսար այս կրկին տե-
 սակեալով փաստակար է նոր ուղղագրութիւ-
 նը. իսկ հինն՝ անփաստ, որով և լաւագոյն
 քան զնորը:

Ուրիշ ինչ մեղք ունէր աւանդական
 ուղղագրութիւնը: Թերեւս այն՝ որ ճշդիւ
 չհամաձայնելով արդի հնչման, Երեանի
 կովիտրեկերէն սխալներ գործել կու տար:
 Բայց մի՞ թէ նոր ուղղագրութեամբ այլ
 ևս չեն սխալիր: Շատ. և վկայ Մակին-
 ցեանը, զոր պիտի լսենք յետոյ. Հին
 գրութեան սխալագրութիւնը գէթ դարձա-
 նելի էր քերականական յատուկ կանոն-
 ներով, որոցմէ զուրկ է նորը, հաստա-
 տուած ականջի դիւրախար դատաստանին
 վրայ: Եւ թէ Երեանի «քաղաքացի»ները
 հաճէին յանելով այդ կանոնները, որ շատ
 համաժողով են, իրենց ընդարձակ ուսա-
 ցիտութեան վրայ, բնաւ զանգատի պատ-
 ճառ չպիտի ունենային աւանդական գրու-
 թեան հակառակ:

Եւ որովհետեւ պատերազմը ձայնաւոր
 տառերու դէմ է, կը բաւէր զիտնալ նոյն
 պարուններուն հետեւեալ ծանօթութիւնները:
 Այսինքն՝ թէ և կը գրուի ընդհանրապէս
 բոլոր ոչ վերջին վանկերու մէջ. և քիչ
 անգամ վերջիններու, ինչպէս զեք, ներ,
 ստուեր. նոյնպէս կրկին բաղաձայնով ա-
 ւարտած բոլոր վերջին վանկերու մէջ,
 զգեստ, մրկա, աշակերտ, բաց ի յոգնական
 քով կազմուածներէն, պետք, դժմ Լն. —
 և կը գրուի բառից ծայրը, բոպէ, մար-
 գարե. նով աւարտած բոլոր վերջին վան-
 կերու մէջ, թորեն, Սուրեն, պարեն, շեն.
 (բացառութիւն՝ բեն, մեն, կեն, դեն). ու-
 րիշ ձայնաւորներէ յառաջ, երբ անցմէ
 անշատ կը հնչուի, եակ, մարգարեութիւն,
 քրիստոնէից. անցեալ անկատարի մէջ, կը
 զրէի, զրէիր, զրեր եւն. — տարակուսի
 պարագային պէտք է նկատել բառին ա-
 ծանցը կամ բարդը. եթէ ասոնց մէջ եով
 կը գրուի, ուրեմն արմատն ալ նոյնպէս
 էր. եթէ իով, արմատն եով էր. օրինակ՝
 նետ — նետով՝ նետահար. տէր — տիրել՝
 տիրական. — աւ, և, ի ձայնաւորներէն
 վերջ, ուր կը լսուի Վի նմանող ձայնը,
 միշտ չ կը գրուի, բաական, պարգեա, ա-
 նա, բաց ի բարդերէն՝ զօրավար, օթե-
 վանք, կարեփէր Լն. բառից սկիզբը, ասոնց
 բարդերուն մէջ և ոչ զրէն վերջ վ, վարգ,



անվախճան, ծով, ծառով. իսկ բաղամայն գրեթե վերջ ու, յողութ, պատուէր. — քառավորջի ին սեռականի մէջ շի կը փոխուի, և իւր՝ ունի. եկեղեցի՝ եկեղեցւոյ, պատիս՝ պատուոյ. — յն կը գրուի բառից սկիզբը, ու յետ ւն և ու տառերու, և բոլոր հայերէն յատուկ և հասարակ աւանանք, բայեր ու հոլովներ՝ ւն և ո գրելով աւարտած, ունին զայն. Արտ, շուկայ, կայ, Սատայ, երեկոյ, որդւոյ. բաւցառութիւն կը կազմեն գերանուանք, սա, սորա, սոցա, քո ևն. մակբայք՝ ահա, ապա, հապա. հրամայականք՝ հաւատա՛, խղա՛. և օտար անուանք՝ Աննա, Եղիտ, Օւզա ևն. — օ կը գործածուի յոգնակի գործիականի մէջ. նաև ուրիշ տեղեր՝ ւնի փոխան, ձայնակից ուն և զատուելով վարժութեամբ միայն:

Այս ու բաղամայնից վերաբերեալ փոքրաթիւ կանոնները¹, որ շատ աւելի պարզ և դիրքին են քան նշանաւոր դիւրեւորին սահմանաձեւերը, ուսուցանելով նաւթալիթարանի մանկանց, տեսնել եմ՝ որ անոնք քնաւ չեն զգացած Երեւանի կովի սարկերտն տաղնապն ու վտանգը հայ ուղղագրութեան դաշտին վրայ, և դիրքութեամբ ու զիտակից ուրախութեամբ մը հետեւեր են նոյն կանոնաց:

12. — Արդի հասուն սերունդը, որ մտադիր չէ մանկանալու և աշակերտելու Երեւանի դպրոցներու մէջ, իւր ներկայացուցչաց բերանով զգացուց՝ թէ չեղեալ պիտի նկատէր պարտադրեալ նորաձեւութիւնը, և պիտի շարունակէր ընթանալ իւր սովորական ճանապարհէն, ինչպէս ըրտաւորէն մինչև ցայսօր. Ասոր հետեւանքն այն պիտի լինի՝ որ կովկասեան ապագայ սերունդը պիտի հեռանայ արդի և իրեն ժամանակակից արտասահմանի սերունդէն, և երկու մեծ հատուածներուն մէջ աւելի պիտի ընդլայնի լեզուական վիճը, որ վերջին տարիներս դէպ ի փակուս կ'երթար: Մեր այս քաղաքական ճգնաժամին մէջ,

ուր միութիւնն այնքան ստիպողական է, ուր Հայաստան պէտք ունի իւր գաղութները բարոյապէս կապելու իրեն հետ, ոչ թէ ցրտացնելու և հեռացնելու, և ուր պետական գործօնէութիւնը հարկաւոր էր ուրիշ դաշտերու վրայ, ելնել հանրութեան սրտին ու խղճին հակառակ այդպիսի քայլ մ'ընել, խոհեմութեան լաւագոյն թիւադրութիւնը չէինք կարող համարել: Եւ ոչ ալ յաւերժանալու սահմանուած կարգադրութիւն մ'է, կը զրէի 1922ին, առանց կարօտելու մարգարէական հոգւոյ:

Այս բոլոր նկատողութեանց ու մեղրեան ուղղագրութեան կենսական պահանջմանց առջև՝ որքան միամիտ թուեցաւ մեզ այն ժամանակ «Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդաւ կան կոմիսարներ խորհրդի» սահմանը՝ զոր կու տար աւանդական ուղղագրութեան, որակելով «անպէտք և ապարդիւն ժամաւ լանդառութիւն և աշխատանք»: Եթէ զայս ըսէին ճանապարհի կամ ճէնք հայերենի համար՝ հաստանալի էր. բայց այդ ճանական դատաստանը, թէպէտ ներկայիս Երեւանի կոմիտարիատին ու դիւրեւորին հետ, անկարելի եղաւ մեզ հաշտեցնել Հայաստանի վարիչներու բարձր պաշտօնին և աստիճանին հետ:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Յարմարակից)

Գ Ր Ա Կ Ա Ն

Ռ Ո Ւ Ա Ն Ի Ե Ր Գ Ը¹

◁ ○ ▷

Ա.

Մեր թագաւորը կարողու, կայսրը, Մեծն, ՀԱԿԱՆԻԱՍ՝ մընաց լըման Խօթ տարի՝ Նուաճեց երկիրն ամբարտաւան մինչև ծով: Ոչ մի ամրոց որ դիմադրէ իր առջև, Ոչ մի պարիսպ, ոչ մի քաղաք գրաւուելիք. Լոկ Սարակոսը որ լերան մը մէջ է.

1. Հմմտ. Հ. Ա. Ղազիկան, Հայ լեզուի ուղղագրական ցանկ, Վննաթի, 1923:

1. Յառաջաբանը տես առաջին Ռատորիմ մէջ: